11 Արդ առակն այս է. Սերմը Աստծո խոսքն է: 12 Ճանապարհի մոտինն էլ նրանք են, որ լսում են և հետո սատանան գալիս է և խոսքը նրանց սրտից հանում է, որ չհավատան և փրկվեն: 13 Ապառաժի վրայիններն էլ նրանք են, որ երբ որ կլսեն, խոսքը ուրախությամբ ընդունում են, սակայն սրանք արմատ չունեն: Մի առ ժամանակ հավատում են, բայց փորձության ժամանակ հեռանում են: 14 Փշերի մեջ ընկնողն էլ նրանք են, որ խոսքը լսած են լինում, բայց հոգսերից և հարստությունից և կյանքի զվարճություններից գնալով խեղդվում են, և անպտուղ են լինում: 15 Բայց այն պարարտ երկրի միջինը, նրանք են, որ բարի և հոժար սրտով խոսքը լսում և ընդունում են, և համբերությամբ պտուղ են տալիս:

ՍԵՐՄԸ ԲԱՐԻ ՀՈՂՈՒՄ

1. Ամեն ինչ սկսվում է հողից, ոչ թե սերմից:

- *Եր. 17:9 - Խորամանկ է սիրտը ամենից ավելի և ապականված. նորան ո՞վ կարող է հասկանալ:*
- *Եզ. 36:26 - Եւ ես ձեզ նոր սիրտ պիտի տամ, և նոր հոգի պիտի դնեմ ձեր մեջ, և վեր պիտի առնեմ ձեր մարմնից քարեղէն սիրտը և ձեզ մարմնեղէն սիրտ պիտի տամ:*

- **Կարևորը՝ հողի վիճակն է:**
  - *1 Պետ. 1:23 - Վերստին ծնուած լինելով ոչ թէ ապականութեան սերմից այլ անապական սերմից. Աստուծոյ կենդանի և յաւիտենական խօսքովը:*

2. Բարի հողը լսում է Խոսքը:

- Հինգ քայլ՝ ավելի լավ լսելու համար:
- Երբ մենք լսող ականջ ունենք, մենք կլսենք և կհասկանանք:
- Ընդունել, Հասկանալ, Հիշել, Գնահատել, Արձագանքել:
- Սաղ. 62:11 - Աստուած մի անգամ խօսեց. ես երկու անգամ լսեցի այս. թէ զօրութիւնն Աստուծունն է:
- Հակ. 1:19 - Ուստի, իմ սիրելի եղբայրներ, թող ամեն մարդ շուտ լինի լսելու համար, և ծանր՝ խօսելու համար, և ծանր՝ բարկանալու համար:

3. Բարի հողը պահում է Խոսքը:

- *Արդ առակն այս է. Սերմը Աստծո խոսքն է: 12 Ճանապարհի մոտինն էլ նրանք են, որ լսում են և հետո սատանան գալիս է և խոսքը նրանց սրտից հանում է, որ չհավատան և փրկվեն:*
- *1 Թես. 5:21-22 - Ամեն բան փորձեցէք, բարին ամուր բռնեցէք:*

4. Բարի հողը հարատևում է՝ հունձք տալով:

- *Հռ. 5:3-5 - 3 Եւ ոչ միայն այսքան, այլ նեղութիւնների մէջ էլ պարծենում ենք. գիտենալով որ նեղութիւնը համբերութիւն է գործում, 4 Համբերութիւնը՝ փորձառութիւն, փորձառութիւնը՝ յոյս. 5 Յոյսն էլ չէ ամաչեցնում. որովհետև Աստուծոյ սերը փռուած է մեր սրտերի մէջ Սուրբ Հոգու ձեռովը՝ որ տրուեցաւ մեզ:*